

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Կորպորատիվ վեճերով գործերի քննության առանձնահատկությունները

Դաս 10

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+դասի տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար անհրաժեշտ է **240 րոպե / 4 ժամ:**

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում):

Քաղաքացիական դատավարությունում հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերի շարքում կորպորատիվ վեճերով գործերի վարույթի ամրագրմամբ (Օրենսգրքի 25-րդ գլուխ) Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ առանձնահատուկ իրավական կարգավորում է ստացել կորպորատիվ վեճերի քննությունը:

Կորպորատիվ իրավահարաբերություններն ընդհանուր առմամբ բնութագրվում են ինչպես նեղ, այնպես էլ լայն առումով: Նեղ առումով դրանք ներառում են կորպորացիայի ներսում առաջացող հարաբերությունները (կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմը), օրինակ՝



Մինչև 5 րոպե

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք ի ն ք ն ա ս տ ու լ գ ի չ հարցերին:



Մինչև 180 րոպե

մասնակիցների՝ ընկերության կառավարմանը մասնակցելու և ընկերության գործունեությունը վերահսկելու առնչությամբ ծագող հասարակական հարաբերությունները, իսկ լայն առումով կորպորատիվ իրավահարաբերություններն ընկալվում են որպես կորպորացիայի՝ որպես գործարարական գործունեության սուբյեկտի գործունեությանը վերաբերող հասարակական հարաբերություններ (կորպորատիվ իրավահարաբերությունների արտաքին կողմ), օրինակ՝ կորպորացիաների ստեղծման և գործունեության դադարեցման գործընթացի պետական կարգավորումը:

Օրենսգիրքը կորպորատիվ վեճերը բնորոշում է որպես իրավաբանական անձի ստեղծման, կառավարման և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության (անդամության) հետ կապված իրավահարաբերություններից բխող վեճեր: Այսինքն՝ Օրենսգրքի 25-րդ գլխի իրավակարգավորումների հիմքում առավելապես կորպորատիվ իրավահարաբերություն հասկացության նեղ իմաստն է, և քննարկվող հատուկ հայցային վարույթի կարգով կարող են քննվել միայն այնպիսի իրավահարաբերություններից բխող վեճերը, որոնք բխում են.

1. իրավաբանական անձի **ստեղծման** իրավահարաբերություններից.
2. իրավաբանական անձի **կառավարման** իրավահարաբերություններից.
3. իրավաբանական անձի **կանոնադրական կապիտալում մասնակցության (անդամության)** հետ կապված իրավահարաբերություններից:

Կորպորատիվ վեճերի այս բնորոշումը ենթադրում է նաև հատուկ վարույթի կարգով քննվող այս խումբ վեճերի **սուբյեկտային առանձնահատուկ կազմ**: Ընդ որում, «կորպորատիվ վեճ» հասկացությունը չի ենթադրում վեճի ծագում բացառապես իրավաբանական անձանց միջև: Կորպորատիվ վեճի կողմ կարող են հանդիսանալ նաև ֆիզիկական անձինք, քանի որ վեճը կորպորատիվ համարելու հիմքը ոչ թե վեճի սուբյեկտային կազմն է, այլ վեճի առարկայական բնույթը, տվյալ դեպքում՝ ֆիզիկական անձի և իրավաբանական անձի միջև առկա կապը, մասնավորապես՝ իրավաբանական անձի ստեղծման կամ կառավարմանը վերջինիս մասնակցությունը: Ուստի կորպորատիվ վեճերով գործին մասնակցող անձինք սովորաբար կորպորատիվ իրավահարաբերությունների ներքին կողմին առնչվող սուբյեկտներն են՝ իրավաբանական անձի մասնակցները (անդամները, բաժնետերերը և այլն), կառավարման մարմինները, ինչպես նաև իրավաբանական անձի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները:

Սահմանելով կորպորատիվ վեճերի հասկացությունը և վեճը կորպորատիվ վեճերի քննության հատուկ հայցային վարույթի կարգով քննելու ընդհանուր հիմքերը՝ Օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանվել է նաև այս վարույթով քննության ենթակա կորպորատիվ վեճերի ոչ սպառիչ, ուղղորդող ցանկ, որը ներառում է ստորև ներկայացվող վեճերը:

1. **Իրավաբանական անձի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման** հետ կապված վեճերը: Այս խումբ վեճերից են օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրավաբանական անձի դատական կարգով վերակազմակերպման և հարկադիր լուծարման հետ կապված վեճերը (օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին և 51-րդ հոդվածի 2-րդ մասերի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ, 18-րդ հոդվածի 2-րդ, 38-րդ հոդվածի 7-րդ, 40-րդ հոդվածի 4-րդ, 43-րդ հոդվածի 4-րդ մասերի հիման վրա ծագող վեճերը):

2. **Բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի, կոոպերատիվի անդամների փայերի պատկանելության, դրանց նկատմամբ սահմանափակումների և այդ սահմանափակումներից բխող իրավունքների իրականացման** հետ կապված վեճերը, ներառյալ՝ բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի, կոոպերատիվի անդամների փայերի կապակցությամբ կնքված գործարքներից բխող, այդ գործարքներն անվավեր ճանաչելու և (կամ) անվավերության հետևանքները կիրառելու, բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի վրա բռնագանձում տարածելու հետ կապված վեճերը: Այս կանոնից բացառություն են, սակայն, բաժնետոմսեր, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում



բաժնեմասեր, կոոպերատիվի անդամի փայեր ներառող ժառանգությունը կամ ամուսինների ընդհանուր սեփականությունը բաժանելու հետ կապված վեճերը, որոնք քննության են ենթակա ոչ թե Օրենսգրքի 25-րդ գլխի, այլ ընդհանուր հայցային վարույթի կանոններով:

3. Իրավաբանական անձի հիմնադիրների, մասնակիցների կամ անդամների՝ **իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու**, իրավաբանական անձի կնքած **գործարքն անվավեր ճանաչելու**, գործարքի **անվավերության հետևանքները կիրառելու** վերաբերյալ պահանջների հետ կապված վեճերը: Հատկանշական է, որ կորպորատիվ վեճերի վարույթի կանոններով քննության են ենթակա ոչ թե իրավաբանական անձի կնքած գործարքն անվավեր ճանաչելու պահանջների հետ կապված բոլոր գործերը, այլ միայն այն գործերը, որոնցով որպես հայցվոր հանդես են գալիս իրավաբանական անձի հիմնադիրները, մասնակիցները կամ անդամները: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի՝ Ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով դատարան դիմելու իրավունք է վերապահել Ընկերությանը կամ Ընկերության այն բաժնետիրոջը (բաժնետերերին), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա էլ ընկերության խորհրդի անդամի, գործադիր մարմնի կողմից ընկերությանը պատճառված վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունեն ընկերությունը կամ նրա մասնակիցը:

4. Իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող **մարմինների ձևավորման** կամ դրանց կազմում ընդգրկված անձանց նշանակելու (ընտրելու), այդ անձանց **լիազորությունները դադարեցնելու, կասեցնելու**, իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների կազմում ընդգրկված կամ նախկինում ընդգրկված **անձանց պատասխանատվության** հետ կապված վեճերը: Այս խումբ վեճերի շարքին են դասվում նաև միանձնյա կամ կոլեգիալ գործադիր մարմնի լիազորությունները դադարեցնելու վեճերը, որոնք թեև, որպես ընդհանուր կանոն, քննվում են քննարկվող գլխի կանոններով, սակայն որոշակի դեպքերում կարող են քննվել նաև Օրենսգրքի 24-րդ (առանձին աշխատանքային գործերով վեճերը) գլխի կանոններով, երբ հայցի հիմքում բացառապես գործադիր մարմնի և իրավաբանական անձի միջև աշխատանքային հարաբերություններն են: Հետևաբար, օրինակ, միանձնյա գործադիր մարմնի ղեկավարի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծումն անվավեր ճանաչելու պահանջով հայցը կարող է քննվել ինչպես Օրենսգրքի 25-րդ, այնպես էլ 24-րդ գլխի կանոններով՝ կախված հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունների բնույթից և հիմք ընդունելով նաև գործադիր մարմնի անդամների և իրավաբանական անձի միջև իրավահարաբերություններում աշխատանքային հարաբերությունների՝

կորպորատիվ իրավահարաբերություններից ածանցյալ լինելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ու Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները¹: Նման վեճերի քննության կանոնները որոշելու հիմքում պետք է դրվեն նաև միանձնյա կամ կոլեգիալ գործադիր մարմնի լիազորությունները ցանկացած պահի դադարեցվելու վերաբերյալ իրավակարգավորումները² և Օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումն առ այն, որ վիճարկվող անհատական իրավական ակտը ենթակա է անվավեր ճանաչման, եթե դրանում նշված չէ համապատասխանաբար աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու փաստական կամ իրավական հիմքը, քանի որ իրենց բնույթով կորպորատիվ իրավահարաբերություններից բխող վեճերի նկատմամբ Օրենսգրքի 24-րդ գլխի կանոնները կիրառման ենթակա չլինելու պայմաններում դրանց կիրառման դեպքում հիշատակված երկու նորմերի միջև հակասություն կառաջանա:

5. Արժեթղթերի թողարկման, ներառյալ՝ թողարկողի կառավարման մարմինների որոշումների իրավաչափության և արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքները վիճարկելու հետ կապված վեճերը:

6. Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեությունից բխող այն վեճերը, որոնք կապված են բաժնետոմսերի և այլ

¹Տե՛ս Սահմանադրական դատարանի 28.10.2016թ. թիվ ՍԴՈ-1316 և թիվ ԵԿԴ/1896/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 28.12.2015թ որոշումները:

² Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասը:

արժեթղթերի նկատմամբ **իրավունքների**
հաշվառման (գրանցման), ինչպես նաև
արժեթղթերի տեղաբաշխման և (կամ)
շրջանառության կապակցությամբ օրենքով
Նախատեսված այլ իրավունքների իրականացման
և պարտականությունների կատարման հետ:
Օրինակ, այս խումբ վեճերի շարքն են դասվում
«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի
123-րդ հոդվածով սահմանված՝
արժեթղթերը շուկայում առևտրին
թույլատրելու իրավունքը ճանաչելու և օպերատորին
իր արժեթղթերը շուկայում առևտրին թույլատրել
պարտավորեցնելու, ինչպես նաև շուկային
մասնակցելու իր իրավունքը ճանաչելու և
օպերատորին իրեն շուկայի մասնակցի կարգավիճակ
տրամադրել պարտավորեցնելու վերաբերյալ
վեճերը:

7. **Իրավաբանական անձի մասնակիցների ընդհանուր ժողովի գումարման հետ** կապված վեճերը: Այս խումբ վեճի օրինակ է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝ արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
8. **Իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումների իրավաչափության** հետ կապված վեճերը: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը սահմանում է ընկերության մասնակցի դիմումի հիման վրա նույն օրենքի, այլ իրավական ակտերի,

ինչպես նաև ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընդունված կամ ընկերության մասնակցի իրավունքները և օրինական շահերը խախտող ընդհանուր ժողովի որոշումը դատական կարգով անվավեր ճանաչելու իրավական հնարավորություն: Ընդ որում, նման դիմում կարող է տրվել երկու ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ ընկերության մասնակիցն իմացել կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին: Նույն հոդվածով սահմանվում է նաև սույն օրենքի, այլ իրավական ակտերի, ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընդունված և ընկերության կամ ընկերության մասնակցի իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարող՝ ընկերության խորհրդի, ընկերության գործադիր մարմնի կամ կառավարչի որոշումը ընկերության մասնակցի դիմումով դատական կարգով անվավեր ճանաչելու հնարավորությունը: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով, 68-րդ հոդվածի 13-րդ մասով, 72-րդ հոդվածի 6-րդ մասերով ևս ամրագրվում է բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի և խորհրդի համապատասխան որոշումները դատական կարգով վիճարկելու բաժնետերերի իրավունքը:

9. Իրավաբանական անձի **մասնակցի (անդամի)**՝ իրավաբանական անձից **դուրս գալու և հեռացնելու** հետ կապված վեճերը: Այս խումբ վեճերից են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ծագող վեճերը, որի համաձայն՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով

տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

10. Իրավաբանական անձի մասնակցի (անդամի)՝ օրենքով նախատեսված իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման հետ կապված վեճերը: Այս խումբ վեճերից են, օրինակ, սահմանված ժամկետում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ավանդի չներդրման հետ կապված վեճերը:

Չաշվի առնելով կորպորատիվ հարաբերությունների հարափոփոխ և անընդհատ զարգացող բնույթը՝ օրենսդիրը սահմանել է կորպորատիվ համարվող վեճերի ոչ սպառնիչ ցանկ, ուստի յուրաքանչյուր դեպքում կորպորատիվ իրավահարաբերությունների հետ առնչվող, սակայն վերոնշյալ ցանկում չներառված կորպորատիվ վեճերի քննության կանոններով քննության ենթակա լինելու հարցը պարզելու համար հիմք պետք է ընդունվի վեճը կորպորատիվ համարելու ընդհանուր կանոնը՝ դրա իրավաբանական անձի ստեղծման, կառավարման և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության (անդամության) հետ կապված իրավահարաբերություններից բխելը: Օրենսգրքով առանձնացված կորպորատիվ վեճերը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի ձևով.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐ

Հիմնադիրների, մասնակիցների կամ անդամների՝ **իրավաբանական անձին պատճառած վնասը հատուցելու**, իրավաբանական անձի կնքած **գործարքն անվավեր ճանաչելու**, գործարքի **անվավերության հետևանքները կիրառելու** վերաբերյալ պահանջների հետ կապված վեճերը:

Արժեթղթերի թողարկման, ներառյալ՝ թողարկողի կառավարման մարմինների որոշումների իրավաչափության արժեթղթերի **տեղափաշխման** ընթացքում կնքված **գործարքները վիճարկելու** հետ կապված վեճերը:

Իրավաբանական անձի **մասնակիցների ընդհանուր ժողովի** գումարման հետ կապված վեճերը:

Բաժնետոմսերի, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասերի, կոոպերատիվի անդամների փայերի **պատկանելության**, դրանց նկատմամբ **սահմանափակումների** և այդ սահմանափակումներից բխող **իրավունքների իրականացման հետ կապված վեճերը**:

Մասնակցի (անդամի)՝ օրենքով նախատեսված **իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման** հետ կապված վեճերը:

Կառավարման մարմինների որոշումների իրավաչափության հետ կապված վեճերը

Իրավաբանական անձի **կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների ձևավորման** կամ դրանց կազմում ընդգրկված անձանց **նշանակելու** (ընտրելու), այդ անձանց լիազորությունները դադարեցնելու, կասեցնելու, իրավաբանական անձի կառավարման և հսկողություն իրականացնող մարմինների կազմում ընդգրկված անձանց պատասխանատվության հետ կապված վեճերը:

Իրավաբանական անձի **ստեղծման, վերակազմակերպման և լուծարման** հետ կապված վեճերը:

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեությունից բխող այն վեճերը, որոնք կապված են բաժնետոմսերի և այլ արժեթղթերի նկատմամբ **իրավունքների հաշվառման** (գրանցման), ինչպես նաև արժեթղթերի **տեղափաշխման և (կամ) շրջանառության կապակցությամբ** օրենքով նախատեսված այլ **իրականացման և պարտականությունների կատարման հետ**:

Իրավաբանական անձի մասնակիցների **ընդհանուր ժողովի գումարման** հետ կապված վեճերը:

Մասնակցի (անդամի)՝ իրավաբանական անձից **դուրս գալու և հեռացնելու** հետ կապված վեճերը:



Օրենսգիրքն սահմանում է ինչպես 25-րդ գլխի կանոններով քննության ենթակա բոլոր վեճերի քննության ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները, այնպես էլ առանձին կորպորատիվ վեճերի քննության համար հատուկ կարգավորումներ, որոնք ամբողջության մեջ պայմանավորում են այս խումբ վեճերի քննությունը հատուկ հայցային վարույթի կարգով նախատեսելը:

Կորպորատիվ վեճերի առաջին ընդհանուր առանձնահատկությունն այս խումբ վեճերի **ընդդատությունն է**: Օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասն այս վեճերի համար սահմանում է ընդդատության հատուկ կանոն՝ սահմանելով, որ կորպորատիվ վեճերով գործերը քննվում են այն իրավաբանական անձի գտնվելու վայրի դատարանում, որի ստեղծման, կառավարման և իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության (անդամության) հետ կապված իրավահարաբերություններից ծագել է տվյալ վեճը՝ անկախ նրանից, թե կոնկրետ քաղաքացիական գործով դատավարական ինչ կարգավիճակ ունի այդ իրավաբանական անձը:

Կորպորատիվ վեճերի քննության երկրորդ ընդհանուր առանձնահատկությունը կորպորատիվ վեճերով **հայցադիմումին ներկայացվող հատուկ պահանջներն են**: Կորպորատիվ վեճով դատարան ներկայացվող հայցադիմումի նկատմամբ տարածվում են հայցադիմումի համար Օրենսգրքով սահմանված ընդհանուր պահանջները: Ի լրումն այս պահանջների՝ կորպորատիվ վեճով դատարան ներկայացվող հայցադիմումի մեջ նշվում են նաև Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավաբանական անձի պետական

գրանցման համարը և գտնվելու վայրի հասցեն: Հատուկ պահանջ է առաջադրվում նաև հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերին: Մասնավորապես, ի թիվս հայցադիմումին կից ներկայացվող՝ Օրենսգրքի 122-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի, կորպորատիվ վեճով հայցադիմումին կցվում են նաև իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը կամ իրավաբանական անձի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթուղթ, որը տեղեկություններ է պարունակում պետական գրանցման համարի և գտնվելու վայրի մասին:

Կորպորատիվ վեճերի քննության հաջորդ ընդհանուր առանձնահատկությունը կորպորատիվ վեճերով **տեղեկատվության մատչելիության** վերաբերյալ իրավակարգավորումներն են: Տեղեկատվության մատչելիության վերաբերյալ իրավակարգավորումներն ընդհանուր առմամբ ուղղված են կորպորատիվ վեճի կողմերի և երրորդ անձանց համար դատավարական հավելյալ երաշխիքների ապահովմանը: Այս համատեքստում Օրենսգիրքը նախևառաջ 215-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավաբանական անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համատեքստում նախատեսում է, որ այդ իրավաբանական անձի՝ գործին մասնակցող անձի կարգավիճակ չունենալու դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին որոշումներն ուղարկում է տվյալ իրավաբանական անձին՝ նրան ծանուցելով Օրենսգրքի 38-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ

չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու իրավունքի և դրա իրականացման կարգի մասին (ի դեպ, Օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասում առկա է վրիպակ՝ «38-րդ» հոդվածի փոխարեն, որը կարգավորում է վեճի առարկային նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի դատավարական կարգավիճակի հետ կապված հարցերը, նշվել է «39-րդ»-ը, որը քննարկվող դեպքի նկատմամբ ակնհայտորեն կիրառելի չէ):

Որպես կորպորատիվ վեճով գործի քննության մատչելիության և Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավաբանական անձի իրավունքների պաշտպանության հավելյալ երաշխիք՝ սահմանվել է այդ իրավաբանական անձի իրավունքը՝ ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով դատարանից տեղեկություններ ստանալու գործի ընթացքի վերաբերյալ նաև այն դեպքերում, երբ չունի գործին մասնակցող անձի կարգավիճակ (218 հոդվ., մաս 2): Այս կարգավորումը, թերևս, Օրենսգրքում ամրագրում ստացած բացառիկ կանոն է, որը գործին մասնակցող անձի կարգավիճակ չունեցող անձին ընձեռում է գործին մասնակցող անձանց իրավունքներից օգտվելու բավականին լայն հնարավորություն:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ դատարանը կարող է **պարտավորեցնել իրավաբանական անձին տեղեկացնելու** տվյալ իրավաբանական անձի մասնակիցներին (անդամներին), նրա կառավարման և հսկողություն իրականացնող

մարմինների կազմում ընդգրկված անձանց, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներին հայցադիմումը վարույթ ընդունելու, ներկայացված հայցի առարկայի և հիմքերի, ինչպես նաև գործի քննությանը Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ներգրավվելու նրանց իրավունքի մասին (218 հոդվ., մաս 3): Օրենսդիրը չի սահմանում նման դեպքում իրավաբանական անձի կողմից համապատասխան անձանց ու մարմիններին տեղեկացնելու կարգը և ժամկետները: Սակայն հաշվի առնելով գործի քննության հետագա ընթացքի համար նման ծանուցման կարևորությունը՝ այդպիսի ժամկետներ կարող են սահմանվել դատարանի կողմից:

Իրավաբանական անձին առաջադրվող վերոնշյալ՝ տեղեկացնելու պարտավորությունից բխում է կորպորատիվ վեճերի քննության հաջորդ ընդհանուր առանձնահատկությունը: Մասնավորապես, կորպորատիվ վեճերով **դատական տուգանքի** կիրառման առանձնահատուկ կարգավորումը, որի համաձայն՝ Օրենսգրքի 218-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դատարանը կարող է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ կիրառել դատական տուգանք: Տուգանքի կիրառման առանձնահատկությունն այն է, որ այն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ կարող է կիրառվել նաև այն դեպքում, երբ իրավաբանական անձը տվյալ գործին մասնակցող անձի կարգավիճակ չունի: Օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանն իրավունք ունի դատական սանկցիա կիրառել դատավարության մասնակցի կամ դատական նիստին ներկա այլ անձի նկատմամբ: Նկարագրվող իրավիճակում իրավաբանական

անձը, որի գործադիր մարմնի նկատմամբ կիրառվում է դատական տուգանք, գործին մասնակցող անձի կամ դատական նիստին ներկա անձի կարգավիճակ չունի, սակայն Օրենսգրքի 218-րդ հոդվածի հիման վրա իրավաբանական անձին դատարանի կողմից ուղարկվող փաստաթղթերը և պարտադիր կատարման ենթակա պահանջի առաջադրումը ստեղծում են իրավաբանական անձի՝ գործի քննությանը ներկայության ֆիկցիա, ինչն էլ օրենսդրի կողմից դիտվում է հիմք՝ գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ դատական սանկցիայի կիրառման համար:

Կորպորատիվ վեճերի քննության հաջորդ առանձնահատկությունները **կորպորատիվ վեճերով հաշտության համաձայնությանը, հաշտարարությանը և հայցից հրաժարվելուն** վերաբերող առանձնահատուկ պահանջներն են: Կորպորատիվ վեճերի քննության վարույթում դատարանը կարող է չհաստատել հաշտության համաձայնությունը, եթե այն խախտում է Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավաբանական անձի իրավունքներն ու օրինական շահերը, կամ հիմքեր կան կասկածելու, որ համաձայնությունը կնքվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով:


Դատարանը կարող է պահանջներից հրաժարումը ճանաչել ոչ իրավաչափ, եթե այդպիսի հրաժարումը հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին, խախտում է այլ անձի, ներառյալ՝ Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավաբանական անձի իրավունքներն

ու օրինական շահերը, կամ հիմքեր կան կասկածելու, որ հայցվորը պահանջից հրաժարվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո:

Կորպորատիվ վեճերով տեղեկատվության մատչելիության անհրաժեշտությունը և այս վեճերի ռիսկայնությունը հաշվի առնելով՝ ԲԴՕ-ն սահմանում է, որ կորպորատիվ վեճերով հաշտարարության կողմերը չեն օգտվում գաղտնիության վերաբերյալ պայմանով հաշտության համաձայնություն կնքելու և առանց հաշտության համաձայնությունը դատական կարգով հաստատելու գործի վարույթը կարճելու վերաբերյալ համաձայնություն կայացնելու իրավունքից (ԲԴՕ 219-րդ հոդված):

Այսպիսով, կորպորատիվ վեճերի քննությանը վերաբերող ընդհանուր առանձնահատկությունները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՆՁՆԱԿՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսված իրավաբանական անձի մասնակիցների (անդամների)՝ իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու, իրավաբանական անձի կողմից կնքված գործարքն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքները կիրառելու վերաբերյալ պահանջով կորպորատիվ վեճերի քննության վերաբերյալ: Այս խումբ վեճերը քաղաքացիական դատավարությունում այլ անձի իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու դրսևորում են, ինչի ամշչությամբ Օրենսգիրքն սահմանում է, որ այն դեպքերում, երբ իրավաբանական անձի մասնակիցը (անդամը) դիմել է դատարան իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու, իրավաբանական անձի կնքած գործարքն անվավեր ճանաչելու և (կամ) գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջով, նա օգտվում է հայցվորի իրավունքներից, կրում է նրա պարտականությունները, ինչպես նաև կարող է պահանջել գործով կայացված վճռի հարկադիր կատարում՝ հօգուտ իրավաբանական անձի (222 հոդվ., մաս 1): Անկախ նրանից, թե ով է տվյալ գործով հայցվորը, իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջը բավարարող վճիռը կայացվում է հօգուտ այն իրավաբանական անձի, որի շահերի պաշտպանության համար ներկայացվել է հայցը (222 հոդվ., մաս 2): Այս գործերով կայացված վճռի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու դիմում կարող է ներկայացնել ինչպես իրավաբանական անձը, այնպես էլ վերջինիս պատճառված վնասի հատուցման

պահանջ ներկայացրած անձը: Իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործով դատական ծախսերը հավասար բաժիններով կրում են իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջ ներկայացրած մասնակիցները (անդամները) (222 հոդվ., մաս 3):

Առանձնահատուկ կանոններ են նախատեսված իրավաբանական անձի մասնակիցների (անդամների) ընդհանուր ժողով գումարելու և իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ վեճերով, որոնք պետք է քննվեն Օրենսգրքի 41-րդ գլխի՝ պարզեցված վարույթի կանոններով, և որոնց քննության արդյունքում դատարանը վճիռ է կայացնում համապատասխանաբար իրավաբանական անձին օրենքով սահմանված ժամկետում իրավաբանական անձի մասնակիցների (անդամների) ընդհանուր ժողով գումարել պարտավորեցնելու կամ սահմանված կարգով իրավաբանական անձի մասնակցին (անդամին) վճռում նշված տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու վերաբերյալ: Այս խումբ վեճերի քննության պարզեցված ընթացակարգի սահմանումը պայմանավորված է այդ վեճերի բնույթով և դրանց հնարավորինս սեղմ ժամկետում լուծման անհրաժեշտությամբ:

Որպես կորպորատիվ վեճերի քննության հատուկ կանոն՝ Օրենսգիրքը նախատեսում է նաև, որ կորպորատիվ վեճերով խմբային հայցի հիման վրա հարուցված գործի վարույթն

իրականացվում է 26-րդ գլխով նախատեսված կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով (223 հոդվ., մաս 1): Օրինակ, անկախ Օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված՝ դատական ծանուցումները միայն խմբային հայցով ներկայացուցչին ուղարկելու հիմքով բոլոր հայցվորների պատշաճ ծանուցված համարվելու վերաբերյալ իրավակարգավորումից՝ խմբային հայցով շարունակում է գործել նաև դատարանի իրավունքը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ պարտավորեցնել իրավաբանական անձին տեղեկացնելու տվյալ իրավաբանական անձի մասնակիցներին (անդամներին), նրա կառավարման և հսկողությունն իրականացնող մարմինների կազմում ընդգրկված անձանց, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներին հայցադիմումը վարույթ ընդունելու, ներկայացված հայցի առարկայի և հիմքերի, ինչպես նաև գործի քննությանը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ներգրավվելու նրանց իրավունքի մասին:

Առանձին կորպորատիվ վեճերի քննության վերաբերյալ նախատեսված հատուկ կանոնները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով.

ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐ

- Իրավաբանական անձի մասնակիցների (անդամների) ընդհանուր ժողով գումարելու հետ կապված վեճեր
- Իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ու ն տրամադրելու հետ կապված վեճեր

Քննվում են պարզեցված վարույթի կանոններով

- Իրավաբանական անձի մասնակիցների (անդամների)՝ իրավաբանական անձին պատճառված վնասը հատուցելու,
- Իրավաբանական անձի կողմից կնքված գործարքն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքները կիրառելու հետ կապված վեճեր

1. Դատարան դիմած անձն օգտվում է հայցվորի իրավունքներից և պարտականություններից
2. Մասնակիցը կարող է պահանջել վճռի հարկադիր կատարում՝ հօգուտ իրավաբանական անձի
3. Վնասի հատուցման վճիռը՝ հօգուտ իրավաբանական անձի

Կորպորատիվ վեճերով կիրառելու հետ կապված վեճեր

Քննվում են **26-րդ գլխով** նախատեսված կանոնների համաձայն՝ **25-րդ գլխի** կանոնների պահպանմամբ:

1. Ավետիսյան Վ.Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Եր., ԵՊՀ հրատ., 2013, 400 էջ:
2. Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации, под общ. ред. Л. В. Тумановой. М.: «Проспект», 2017. – 672 с.
3. [Սահմանադրական դատարանի 28.10.2016թ. թիվ ՍԴՈ-1316 որոշումը:](#)
4. [Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1896/02/13 քաղաքացիական գործով 28.12.2015 թ. որոշումը:](#)



Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: